«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ
2024թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,

Թույլ տվեք ներկայացնել Ներքին աուդիտի 2024թ. հաշվետվությունը:
Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝

1. Գլխամասային գրասենյակ

- Բանկում ներդրված ԳԳԱԿ համակարգի արդյունավետության և համարժեքության գնահատում:
- Անձնակազմի կառավարման գործընթացի կանոնակարգվածության և ներքին հսկողության պահանջներին համապատասխանության գնահատում:
- «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4-ով սահմանված վարկավորման պահանջների ներդրման արդյունավետության գնահատում:
- «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ում Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, պահպանման (արխիվացման), մշտապես թարմացման, Բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման ընթացակարգերի արդյունավետության գնահատում:
- Պլաստիկ քարտերի տրամադրման, քարտային գործառնությունների, ներառյալ քարտերով տրամադրվող վարկերի ուսումնասիրություն և արդյունավետության գնահատում:
- Անշարժ գույքի գրավով սպառողական և հիփոթեքային վարկավորման գործընթացի կանոնակարգվածության և արդյունավետության մակարդակի գնահատում:
- Պարգևավճարների հաշվարկման և վճարման գործընթացի ուսումնասիրություն:
- 100 մլն դրամ և ավելի գումարի առևտրային վարկերի նպատակային ստուգում, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում:
- 50 մլն դրամ և ավելի գումարի հիփոթեքային և սպառողական վարկերի նպատակային ստուգում, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում:
- Համապատասխանության տնօրինության գործառույթների արդյունավետության գնահատում:
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում և ներքին հսկողության համակարգի գնահատում:
- Ներքին և արտաքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգում:

2. Տարածքային ստորաբաժանումներ

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով համալիր ստուգման են ենթարկվել թվով 7 մասնաճյուղ, թվով 8 մասնաճյուղերում կատարվել են ոսկու գրավով վարկերի նպատակային ստուգումներ, 20 մասնաճյուղերում կատարվել են դրամարկղային հանգույցների գույքագրումներ, ինչպես նաև թվով 9 բանկոմատների գույքագրում:

3. Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա կտրվածքով իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, մասնավորապես՝

- Գլխամասային գրասենյակի դրամարկղային հանգույցի աշխատանքային գործընթացի կազմակերպման ստուգում և գնահատում:
- Գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում:
- Իրավաբանական անձանց հաշվարկային հաշիվների տարեկան տոկոսադրույքների ուսումնասիրություն:
- Բանկի կողմից բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր ուղարկվող հաշվետվությունների ուսումնասիրություն:
- Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից միջազգային մուտքերի դիմաց միջնորդավճարների գանձման գործընթացի ուսումնասիրություն:
- Գրավով ապահովված վարկերի ապահովագրության վերակնքումների գործընթացի ուսումնասիրության:

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- կազմվում է արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, նշանակվում են պատասխանատու անձինք/ստորաբաժանումներ և սահմանվում են կատարման ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից (ցածր, միջին և բարձր), արձանագրված խնդրի բնույթից,
- եռամսյակային կտրվածքով իրականացվում են արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողական աշխատանքներ՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով:

Ներքին աուդիտի եզրակացությունը
ներքին հսկողության համակարգի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- ✓ Բանկի Ներքին աուդիտի 2024թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,

- ✓ ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումները,

- ✓ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բարձրացված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները,

- ✓ KPMG միջազգային ընկերության կողմից «կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման» շրջանակում ներկայացված առաջարկությունների իրագործմանը ուղղված միջոցառումները, ինչպես նաև

- ✓ «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության ստուգման արդյունքների հիման վրա «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները, ձեռնարկվող միջոցառումների արդյունքում, լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի տնօրեն
Արթուր Ղուկասով